Միսաք Մեծարենց

Գարունը կ’ապրեցնե

Կը թանձրանան
տերևներուն
շեղջեր լրքուն,
մինչ կը դառնան
դեռ ծառերուն
մեջ համորեն
հովերն աշնան,
պարն ամեհի:

Ու դեպի տուն
միշտ կը դիմեն
շեշտերն ամեն
ծիծառներուն.
միշտ դեպ ի տուն
ու դեպի ներս
բոլոր իղձերս
ա՛լ տարիր դուն,
չքնա՛ղ աշուն:

Դեպի տամուկ
պատուհանին
ա՛լ կը հառին
աչքերս հիմակ,

ու սե՛ր համակ.
երգըդ կ’իջնե
սրտիս՝ ուր նե
իղձ մը ճերմակ
պիտի գտնե:

Չէ՛, հովերուդ
հետ ցավը չէ՛
որ կը տանջե
սիրտըս հրրուտ.
այլ կը դառնան
իղձ, հուզմունքեդ
բողբոջ գարնան
արևաշող
հույսերն հավետ: